

ԱՎԱՆՊԱԿԱՆ ԵՎ ՆՈՐ ՄԵԴԻԱ. ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԿԵՑՈՒԹՅՈՒՆ*

Ինգա Մարտինյան

Բանալի բառեր՝ ավանդական, նոր մեղիա, տեսաբաններ, հետազոտություն, տպագիր թերթ, գիրք, էլեկտրոնային կրիչ, ինտերնետ, e-books, ինտերնետային լրատվամիջոցներ, կայքեր, սոցիալական ցանցեր:

20-րդ դարը մարդկության զարգացման համար հեղափոխական կարելի է անվանել առնվազն հեռահաղորդակցման միջոցների կտրուկ զարգացման առունով։ Եթե դարասկզբին աշխարհը ցնցվեց հեռագրի առկայությամբ եւ առօրեականացված ռադիոհաղորդումներով, դարակեսին սովորական դարձավ հեռուստատեսությունը, ապա դարավերջին ինտերնետի զանգվածային հասանելիությունը կամխորոշեց 21-րդ դարի մարդու կենսակերպը եւ աշխարհի նորացվող կերտվածքը։ Ավանդական եւ նոր մեղիաներն սկսեցին մրցակցել, գիտնականները բաժանվեցին երկու խմբի։ Նրանց մի մասը ահազանգում էր տպագիր թերթի եւ գրքի մահկան մասին, իսկ մյուսը խոսում էր դրա անհնարինության մասին։ Ամեն դեպքում, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումն ու համացանցի տարածումը ողջ աշխարհում այս կամ այս կերպ ազդում է գրքերի ու մամուլի տպագրության ծավալների վրա։ Այս խնդրին անդրադառնում են նաև արեւմտյան եւ ռուսական ավանդական լրատվամիջոցների ներկայացուցիչները[1]։ Արագինը հիմնականում շոշափում է ավանդական մեղիաների կողմից նոր մեղիաների օգտատերերի տրամադրած օպերատիկ տեղեկատվության կիրառության հնարավորությունները եւ դրանց վստահելիության խնդրիները։ Ռուսաստանյան փորձագետներն իրենց հերթին անդրադառնում են թվայնացման հետեւանքով ինքնատեղեկացվող հասարակության դարաշրջանի գոյությանը, որտեղ տեղեկատվության աղբյուրի դերում կարող է լինել ցանկացած համացանցային օգտատեր։ Մինչ երկու մեղիաների պայքարի վերաբերյալ փաստարկները ներկայացնելը՝ նախ անդրադառնամբ պայքարի օրյեկտներին։

Նոր մեղիա տերմինն առաջին անգամ սկսել են օգտագործել 20-րդ դարի վերջին՝ բնութագրելու համար ինտերնեկտիվ էլեկտրոնային լրատվամիջոցները եւ հոդվածագրիների կողմից տեղեկատվության օգտագործման նոր մեթոդները, որոնք տարբերվում են ավանդական մեղիայից, օրինակ՝ թերթերից։ Այսինքն՝ այս բառեզրով բնութագրվում է թվային, ցանցային տեխնոլոգիաների եւ հաղորդակցության զարգացման գործընթացը։ Կոնվերգենցիան (տարբեր մեթոդների համակցում, հարամիտում) եւ մուլտիմեդիայինքանակության մեջ առաջարկությունները դարձան այսօրվա լրագրության անբաժան մասը։ Հին մեղիա ասելով՝ այստեղ պայմանականորեն նկատի ունենամք տպագիր մամուլը, որն առաջացել է տպագրության գյուտից հետո։ Գրաստանական գյուտը մարդկության պատմության մեջ խոշորագույն հայտնագրություններից մեզն էր։ Այս առաջ մղեց կրթությունը, գիտությունն ու գրականությունը։ Ծնորհիվ տպագիր գրքի՝ մարդկության կուտակած գիտելիքներն սկսեցին ավելի արագ տարածվել։ Դրանք ավելի ամբողջական էին պահպանվում եւ փոխանցվում հետագա սերունդներին։

ՍԱԿ-ի Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության տվյալները հաղորդում են, որ մինչեւ 2040թ. տպագիր թերթերն այլևս չեն լինի, որ դրանց փոխարինելու են թվային կրիչները։ «Մի քանի տարվա ընթացքում տպագիր մամուլը, ինչպի-

* Հոդվածն ընդունվել է 25.12.2016։

Հոդվածը տպագրության է երաշխավորել գիտ.դեկանար բ.գ.թ., դոցենտ Ն.Ն.Մարտիրոսյանը։

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱԼԱՐՄԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

սին որ կա այսօր, արդեն գոյություն չի ունենա», –ասել է կազմակերպության գլխավոր տնօրին Ֆրենսիս Հարին: «Դա էվոլյուցիա է, ոչ վատ է, ոչ էլ լավ: Ուստիմնասիրություններ են անցկացվել, որոնք կանխատեսում են դրանց վախճանը մինչեւ 2040թ. իսկ ԱՄՆ-ի համար՝ մինչեւ 2017թ.», – ասել է Հարին[2]: Նա հավելել է, որ այդ էվոլյուցիան անխուսակելի է: Հարիի խոսքով՝ ԱՄՆ-ում թվային կրիչներով գործերն այսօր ավելի լավ են վաճառվում, քան տպագիր գրքերը, իսկ քաղաքներում գնալով ավելի դժվար է դաշտում գրադարան գտնելը[3]:

Էլեկտրոնային կրիչներից եւ սովորական տպագիր աղբյուրներից կատարվող ընթերցանության վրա մարդկի սկսել են գրեթե նույն ժամանակը ծախսել, ինչը պայմանավորված է դյուրակիր համակարգից օգտագործողների գործոնով, որոնց 52%-ը նախընտրում է էլեկտրոնային ընթերցանությունը: Նման տվյալներ է պարունակում ամերիկյան Gartner գործակալության անցկացրած հարցումը[4], որին մասնակցել է 1569 մարդ ԱՄՆ-ից, Մեծ Բրիտանիայից, Չինաստամից, Ճապոնիայից, Իտալիայից եւ Հնդկաստանից: Ըստ հարցման՝ անհատական համակարգիչներ օգտագործողների 47%-ը դժվարանում է համակարգչով ընթերցել եւ նախընտրում է տպագիր գրքերը: Հարցման տվյալները վկայում են նաև, որ թվային կրիչներով ընթերցանության առաջատարներն առավել երիտասարդ օգտագործողներն են: Բացի այդ՝ տղամարդիկ ավելի են հակված էլեկտրոնային ընթերցանությանը, քան կանայք: Հատկանշական է, որ հարցվածների շուրջ 40%-ը երբեւ չի օգտվել էլեկտրոնային գրքերից (օրինակ՝ Amazon Kindle-ի ծառայություններից): Մի շարք փորձագետների կարծիքով՝ էլեկտրոնային կրիչները զգալի վնաս են պատճառում «թղթային» արդյունաբերությանը, ինչը նկատելի է արդեն ներկայում, ավելի շատ հրատարակություններ են թվայնացվում, թերթերի տպաքանակը անկում է ապրում, իսկ պահանջենների վաճառքի ծավալներն աճում են: Ակնկալվում է, որ առաջիկա 5 տարում այս շուկան մի քանի անգամ կամի՝ 2015թ. կազմելով \$49 մլրդ[5]:

«Պատկերացրեք աշխարհն առանց թերթերի: Հնարավոր է՝ դա ավելի շուտ տեղի ունենա, քան դուք կարծում եք: Մի կողմ դոքեք թղթի վրա թանաքի գաղափարը, փոխարենը մտածեք համակարգի էկրանի վրայի բարերի մասին: Հեշտ է նայել այն դրամատիկ փոփոխություններին, որոնք իր հետ բերել է հնտերնետը վերջին մի քանի տարիների ընթացքում եւ մտածել, որ մենք արդեն տեսնում ենք ժուռնալիստիկայի ապագան: Այն ձեռք է բերում այսրոպեականություն, ավելի շատ է անհատականացվում, աճում է ընթերցողի մասնակցությունը, եւ տեղեկատվությունը ստանում է անհատակ խորությունե-, ասպում է «Օլոյյն ժուռնալիստիկա» գրքում[6]: Pew Research Center-ի վերջին տվյալներով՝ ավանդական լրատվամիջոցներն ամերիկացիների համար սրբնաբացրեն կորցնում են նորությունների աղբյուր լինելու դիրքերը[7]: Ըստ լսարանի՝ միայն հեռուստատեսությունն է, որ հնտերնետի համար մոցակցող պլատֆորմ է մնում: Եթե ավագ սերնդի միջին ամերիկացու համար հնտերնետը դեռ չի դարձել տեղեկատվության որոնման հիմք, ապա 18-29 տարեկան ամերիկացիների ճնշող մեծամասնության (65%) համար հնտերնետն արդեն երկու տարի է, ինչ դարձել է նորությունների հիմնական աղբյուր՝ այդ գժով իր բաժինը 2006-ից սկսած կրկնակի ավելացմելով: Կոլումբիայի համալսարանում կարդացած իր մի դասախոսության ժամանակ Դանիել Օկրենստր[8] (Daniel Okrent) ամենայն մանրամասնությամբ նկարագրել է այն հաճույքը, որը պարգևելու են տպագիր թերթը եւ գիրքը, բայց այնուհետեւ արծանագրել: «Ես հավատում եմ, որ տպագրության բոլոր ծեւերը կնախանան, նրանց դարաշրջանն ավարտված է: Հավանաբար, ես դա չեմ տեսնի, բայց ինձնից երիտասարդները կտեսնեն: 20-30 տարի հետո մենք տպագիր մերիային կնայենք այնպես, ինչպես այժմ նայում ենք ձիով կամ վագո-

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

նով, առագաստանավով ճանապարհորդելուն: Թանաքի ժամանակն ավարտվել է, այն 1 մյջի դրույթ է ծախսում թղթի եւ փոստային ժառայությունների վրա», - ցավով արձանագրում է դասախոսը, որովհետեւ նա տպագիր մեղիային նվիրել է իր կանքի լավագույն 30 տարիները: Այն տեսաբանները ովքեր քննադատում են նոր տեխնոլոգիայի թանկարժեք լինելը, հեղինակային իրավունքի պաշտպանության խնդիրը եւ այլն, դասախոսն անձանը երաշխավորում է, որ որանք ապագայում ևս կլուծվեն:

Ուսումնասիրելով արտասահմանյան բլոգներում, տեսություններում եւ դասախոսություններում զանազան փաստարկմերը, որոնք հիմնավորում են տպագիր մեղիայի դարաշրջանի ավարտը՝ ներկայացնում ենք դրանցից մի քանիսը[9].

1. Դրանք շատ անհարմար են մի շարք իրավիճակներում օգտագործելու համար: Ինչո՞ւ մարդ պետք է ստիպված լինի իր երկու ձեռքն օգտագործել գիրք կարդալիս՝ մեկով բռնել, մյուսով՝ թերթել:

2. Գիրքը կարդալուց հետո այն հայտնվում է գրադարակում եւ հավաքում է վիոշի, շատ քչերն են մտածում այն դեմ նետել կամ տալ ինչ-որ մեկին ընթերցանության:

3. Վերջապես, դա թղթի անտեղի կորուստ է: Դա վնաս է հասցնում շրջակա միջավայրին, օգուտ է տալիս արդյունաբերությանը: Դու չես վճարում գրքում եղած ինֆորմացիայի համար, որու վճարում են մահացած ծառի համար:

4. Ինչքան շատ շոշափելի նյութ դու ունես, այնքան շատ շոշափելի նյութ ունի քեզ: Ընդունիր մինհմանլիզմը եւ գույշու ազատիր անպետը թղթերից:

5. Դրանց հետ ճանապարհորդել բարկացնող է: Դու կարող ես հետո վերցնել մեկ գիրք, բայց այն չուտ կարդալ եւ ավարտել ու մնալ առանց գրքի: Դժվար է ճանապարհորդելիս վերցնել մի ամբողջ գրադարակ, բայց շատ հեշտ է վերցնել համակարգիչը: Գրքերը նախատեսված չեն գրոսաշրջիկների համար:

6. Ապագան էլեկտրոնային գրքերին է, որոնք ավելի կատարելագործված կլինեն, կլինեն սեւ-սպիտակ, առանց մարտկոցների եւ չեն օգտագործի մարտկոցների ուժը, կլիգրավորվեն թերթելուց: Ահա այն փաստարկների խումբը, որոնցով փորձում են ապացուել, որ թերթը եւ գիրքը ապագա չչունեն:

Այժմ անդադարնանը տեսաբանների մյուս խմբին, ովքեր պնդում են, որ տպագիր թերթը եւ գիրքը չեն վերանա եւ ներկայացնում իրենց փաստարկները: *Տեղեկատվական ամվանագության գծով եւլուսական առաջատար փորձագետ Սեբաստիան Մյուլերն ասում է[10]*: «Թերթերը երբեք չեն մահանա, քանի որ հազարավոր կանայք եւ տղամարդիկ դրանց կարիք ունեն. Էլ ինչո՞ւ նրանք առավոտյան պետք է փակեն իրենց դեմքը»: Իսկ փորձագետն նիկ լեռաղուղ, այնուամենայնիվ, իհշեցնում է, որ քաղաքացիական լրագրությունը ազդում է լրագրողների աշխատանքի վրա: Նա նկատում է, որ ավանդական լրատվամիջոցները տեղեկություններ ստանալու համար արդեն օգտվում են հայտնի բլոգերների հրապարակումներից: *Տեսաբանների այս խումբը արձանագրում է. թվային տեխնոլոգիաներն, անշուշտ, հոյակապ են: Բայց, միաժամանակ, նրանք ներկայացնում են մի խումբ փաստարկներ եւ արձանագրում, որ տպագիր բառը թղթի վրա երբեք չի անհետանա:*

Ահա դրանք[11].

1. Տպագրության նկատմամբ պահանջարկը: Հազարավոր իրատարակչություններ գրքեր են տպագրում, որովհետեւ կա դրա պահանջարկը, մարդիկ կարդում են դա, թե կուզ մի հոգի կարդում է մեկ հասոր եւ այն տպագրվում է: Գրքերը կվերանան այն ժամանակ, եթե աշխարհում մահանա վերջին գիրք կարդացող մարդը: Բացի իրատարակումներից՝ աշխարհում բազմաթիվ կոնֆերանսներ եւ EXPO-ներ են կազմակերպում՝ նվիրված գրքին եւ տպագրությանը: Մարդկությունը այնքան խելամիտ կզունվի, որ չի

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱԼԱՐՄԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

հրաժարվի իր պատմության ընթացքում ստացած ամենամեծ պարզեւներից մեկից՝ տպագրության գյուտից:

2. Կարիք չկա կարդալու կրիչի վրա կամ համացանցով, մարտկոցները կարող են նաև գունդիներում կամ էվերեսուում կապ կարող է չլինել: Մինչդեռ, դու ամենուր կարող ես քեզ հետ պահել գիրքը:

3. Ազբերի լարումը: Անշուշտ, թվային էկրանը հմարավորություն է տալիս տարաշափի կամ դրա գույնի փոփոխություն, բայց տպագիր եւ ոչ փայլուն նյութը իսկական խրախճանք է քո աչքերի համար:

4. Ծոշակիելու գործոնը: Հիշենք երգի բառերը՝ գրքի նման ոչինչ չկա: Պատկերացրեք՝ ինչ հաճուքը է շրջել էջերը, նշել ինչ-որ բաներ, ծալել ինչ-որ էջեր, արտագրել լավ մասերը, մինչդեռ համակարգչով դա ընդամենը մեկ ոչտ կամ օրոյ սեղմեն է:

5. Մեծ գրականությունը: Հետեւելով նախորդ՝ 4-րդ կետին, ինչ-որ մեկը կարող է իսկապես փաստել, որ հավատենական դասականների, ինչպես օրինակ՝ Դիկենսի, Ռոլինգի ստեղծագործությունները էկրամիմ կարդալով՝ կարող է գրավել միտքը կամ հոլովել հոգին:

6. Հարեւանության գործոնը գրախանություններում եւ գրադարաններում: Դուք երբեւ փնտորե՞լ եք որեւէ գիրք գրադարակում եւ մեկ այլ գիրք եք գտել, որն ավելի լավն է դուրս եկել: Կամ երբեւ միանգամից երկու կամ երեք գիրք չե՞ք վերցրել՝ համեմատելու նրանց հաղորդած տեղեկատվության բովանդակությունը եւ ոճը: Այլ գնորդներ այս գրքի հետ նաեւ գնել են ...չէ՝ որ այդ խոսքերը համացանցում քեզ ոչ չի ասի:

7. Այժմ թղթի կամ թերթի հմարավորություններին անդրադառնամք: Դյուրությունն այն է, որ կտրում ես հոդվածը եւ դուրս գրում այն նորատեսություն, ընդգծում ես, նշում, լուսանցքներ դնում, ամրացնում ես իրար եւ հոդվածների փունջը, որ կտրտել ես, դնում ես կողք կողքի, այնուհետեւ կանաչ լոլիկը թերթի մեջ փաթաթում ես այն մտցնում թղթեւ տոպարակի մեջ եւ մի քանի օր հետո այն դառնում է վարդագոյն:

8. Թղթի վերամշակման ծրագրերը: Զիկագոյի տարածքում դեղին կամ կանաչ թուղթ մետեղու համար հասուկ աղբամաններ են փակցվում դպրոցի բակերում, եկեղեցական ավտոկայանատեղիներում եւ մի շարք առեւտրի կենտրոններում: Իսկ դու գիտեի՞ր, որ տպագիր թղթից վերամշակվում է 100 սուլոսանոց վերամշակված թուղթ: Իսկ վերամշակված թուղթը մեզ անհրաժեշտ է մարդու լյանքի ընթացքում ամենից շատ այցելված վայրերից մեկում՝ զուգարանում: Եթե վերանան թերթերը, ապա ինչպես կստեղծնեն գուգարանի թղթերը, կամ ի նշ պետք է օօտագործնեն մարդիկ:

9. Դուք չեք կարող սովորեցնել ծեր շանը նոր հմարքներ: Այրաես էլ թղթի բնիկները, ովքեր ծնվել են մինչեւ 1980-ականները, միշտ կնախընտրեն թուղթը:

10. Տպագիր բառն ունի հասուկ հեղինակություն: Բոլորի ականջներում հնչում է՝ ի սկզբանե էր բառը: Դրանով էլ պայմանավորված է միայն տպագիր բառին հասուկ հեղինակությունը: Պետք չէ ուսնձգություն անել աստվածաշնչյան այդ ծշմարտության դեմ:

11. Տպագիր պատկերը հազար բար արժե: Բայց իսկապես գնահատելով յուրաքանչյուր մանրութ՝ այն պետք է ունենա որոշակի մշտականություն եւ չի կարող լինել թուցիկ պատկեր էկրանի վրա:

12. Տպագիր թերթը կամ գիրքը մի վայր է՝ նորից այցելելու համար: Այստեղ կարելի է հեշտությամբ վերադառնալ, երբ մեր միտքը ընկալունակ է: Դրան հակառակ՝ ինտերնետը շատ անհանգիստ ընթացքով շտապում է դեպի ոչ մի տեղ: Փիլիսոփան, ով ասում է, որ նույն գետը երկու անգամ չեն կարող մնանել, իսկապես տեսարան է:

Այս գործոնները, ըստ տեսաբանների, երկար ժամանակ կապահեն թերթերն ու գրքերը:

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

«Ամենաառավոտ ինծ սպասում են The Financial Times-ը, Chicago Tribune-ը, New York Times-ը and Wall Street Journal-ը եւ են դրանցից իմանում եմ աշխարհի նորույթում մերը: Ես կարում եմ, թե օրական ինչքան ծառ է կտրվում աշխարհում, եւ են ինծ մեղավոր եմ զգում դրա համար, որովհետեւ դրանցից ստեղծվում են այս թղթերը, բայց երբ հիշում եմ, թե ինչքան են շրջակա միջավայրին վնաս հասցնում համակարգիչը եւ համացանցը օգտագործողները, ես նախընտրում եմ կարող թերթերը: Դրանցից բացի՝ ես մի քիչ էլ էգիստ եմ, ինծ համար թանկ են իմ զգացողությունները, մասնավորապես՝ տպագիր թերթի հաճույքը, շոշափում եմ այն, թերթում եմ, ինծ համար թանկ է այդ ամենը, իսկ դրանք երբեք չեն առաջանում օնյայն կարդալիս: Եւ հետո, իմ ժեր աչքերը այնքան երախտապարտ են ինծ: Եւ մինչ ես մտածում եմ դեաի արդյունավետություն մարդկության անողոք ճամփորդության մասին, որոնց մասին հալորդում են նաեւ իմ թերթերը, որ պես ավելի նվազ վատնող, ես եկա եգրակացության, որ ես նոյնամատությունը եմ, որքան յուրաքանչյուրը», - գրել է ամերիկացի գիտնականներից մեկն իր բլոգում՝ հավելելով, որ իր մեղքը քավելու համար ինքը բոլոր թերթերը տանում է եւ լցնում վերամշակման համար նախատեսված աղբարկների մեջ:

Հայաստանում եւս նկատելի է ավանդական եւ նոր մեղիաների մրցակցություն: Լրատվական դաշտում վերջին տարիներին արձանագրվեց համացանցային հեղափոխություն: Ծնորիկվ ագրեսիվ մրցակցության՝ մեկ տարվա ընթացքում համացանցի կապի գներն ընկան միջինում մոտ 10 անգամ: Դրան զուգահեռ «Համակարգիչ բոլորին» ժրագիրը խթանեց տեխնիկայի տարածմանը հանրապետությունով մեկ: Մասմավոր ծեռնարկությունները նոյնապես սկսեցին վարկով համակարգիչ տրամադրել՝ ուժեղացնելով էֆեկտը: Հարժական ինստերնետ կապի զարգացումը դրան զուգահեռ բերեց համացանցի ներթափանցմանը մարգեր: Նևան զարգացումները բերեցին համացանցի ագրեցության աճին: Եւ այսօր ինստերնետն Հայաստանում հիմնական տեղեկատվական աղբյուրներից մեկն է: Բացի դրանց, սոցիալական ցանցերի ազդեցության աճի պատճառով համացանցն այսօր նաեւ հանդիսանում է քաղաքական, քաղաքացիական ակտիվությունների հիմնական հարթակներից մեկը: Հայկական զանգվածային լրատվամիջոցներն այժմ ակտիվորեն ինստեգրվել են սոցիալական ցանցերի եւ բլոգների հետ: Գրեթե ողջ ավանդական մամուլն այժմ աշխատում է սոցիալական ցանցերում՝ մեծ տարածման հասմելու համար Facebook-ի, Odnoklassniki.ru-ի եւ այլ ցանցերի այցելուների շրջանում: Թերեւս դրանով է պայմանավորված, որ մի շարք թերթեր իրենց էջերն են ստեղծել սոցիալական ցանցերում, ինստերնետային լսարանին գրավելու միջոցներ են ծեռնարկում, վերակառուցում են իրենց կայքերը: Դրա օրինակներից է «Առավոտ», «Հրապարակ», «Ժողովուրդ», «Հայկական ժամանակ», «Չորրորդ իշխանություն» թերթերը, որոնք վերակառուցել են կամ վերակառուցում են իրենց կայքերը՝ դարձնելով առցանց՝ փորձելով հետ չմնալ ինստերնետային լրատվամիջոցներից: Կամ «Ժամանակ» թերթը, որն ուներ ծեւակորված լսարան, ուներ նաեւ կայք, որը հանդիսանում էր պարզապես տպագիր նյութերի ինստերնետում տեղադրման հարթակ, առանձնապես քանակական եւ որակական փոփոխություններ չեր ստեղծում: Սակայն, 1in.am կայքի մեկնարկը, որն ակտիվորեն ներկայացված է սոցիալական ցանցերում, բերեց նրան, որ այսօր այն հանդիսանում է առցանց մամուլի առաջատարներից: Հաջորդ փուլում խմբագրությունը նաեւ անցավ ցանցային հեռուստատեսության ծեւակորմանը՝ փաստացի ծածկելով ցանցային այլընտրամքային եւ ավանդական միջոցների հիմնական հնարավորությունները: Այդպես է նաեւ «Ժողովուրդ» թերթի եւ armlur.am կայքի, «Հայկական ժամանակ» եւ armtimes.com-ի, «Հրապարակի» եւ hraparak.am-ի դեպքում: Փաստորեն հայկական մամուլի համար սոցիալական մեդիան դառնում է «նավարկության մեջ մնալու» միակ հնա-

ՄԵԽՐՈԴ ՄԱՆՏՈՎ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

Դավորությունը: Ավելին՝ եթե տպագիր տարբերակով թերթերն ունեն լավագույն դեպքում տպաքանակի չնվազման միտում, ապա ինտերնետում գրեթե բոլոր ՁԼՍ-ների մոտ դիտվում է լսարանի կայուն աճ: Այդ է պատճառը, որ որոշ ավանդական թերթեր, օրինակ՝ «Զորորոդ հշխանություն» որոշել է տպագրվել ընդամենը երկու օր, փոխարենը ստեղծել է իր կայքը, «Ժողովուրդ» թերթն էլ չի տպագրվում շաբաթ օրերին, փոխարենը՝ մերդումներն ուղղում են կայքին: Կարծում եմ՝ տեղեկատվական դաշտի հիմնական զարգացումն այսօր գնում է դեպի ավանդական եւ այլընտրանքային մերժաների միաձուլում: Մամուլը պետք է օգտագործի ինտերնետը՝ որպես տեղեկատվության աղյուր, այդ թվում՝ նաեւ որպես սեփական լսարանի դիմամիկ ավելացման միջավայր: Եվ հակառակ՝ սոցիալական մերժաները լրջորեն ազդում են ավանդական ՁԼՍ-ների եւ տեղեկատվական միջավայրի ծեւավորման վրա: Երկրորդն, ինչ այսօր ակնհայտ է, կոմբինացված ՁԼՍ-ների ծեւավորումն է, երբ տպագիր մանուլը ոչ միայն օգտվում է ինտերնետից, այլև դաշնում է լուսա եւ տեսա-արտադրանքի հեռարձակող: Փաստորեն, ավանդական մերժաները ստիլված են հաշվի նստելու նոր մերժաների ոչ միայն առկայության եւ ունեցած կարեւոր դերակատարության հետ, այլև որոշ դեպքերում դրանց անկոխարինելիության փաստի հետ եւ ավանդական ու նոր մերժաների համակեցության ծեւեր որոնել: Իսկ այն ավանդական ՁԼՍ-ները, որոնք չեն հետեւում այս նոր հնարավորությունների զարգացմանը, վաղ թե ուշ դուրս են մղվելու դաշտից:

Ավելացնենք, որ հայկական կայքերի եւ առցանց լրատվամիջոցների քանակը հստակ թիվը դժվար է ասել, որեւէ տեղ չեն հաշվառվում: Փորձագիտական հաշվարկ-ներով՝ Հայաստանում գործում է ավելի քան 200 լրատվական կայք, որոնց մի մասն է միայն ակտիվ, ունի ընթեցողների կայուն քանակ եւ ազդեցության դաշտ: Օրինակ՝ „Մերժանարքի տախտուոր.ամ համակարգը մոնիթորինգ է իրականացնում մոտ 100 առաջատար լրատվամիջոցների շրջանում: Ի դեպ, տարիներ ի վեր գործել է Circle.am համակարգը, որտեղ գրանցված էր հայկական բուվանուակություն կամ պատկանելություն ունեցող կայքերի մեծամասնությունը: Այդտեղ 2013թ. հունվարի 20-ի դրույթամբ գրանցված է 224 լրատվամիջոց, որտեղ օրական գրանցվել է մոտ 5 մին այցելություն, որոնց մոտ 60%-ը Հայաստանից է[12]: Նոյն ժամանակահատվածում միայն լրատվական կայքերի այցելությունները կազմում են ողջ հայկական համացանցի այցելությունների կեսը՝ օրական մոտ 2,5 միլիոն այցելություն, որոնց 65%-ն է հայաստանցի օգտատեր[13]: Ասում են, թե լրատվամիջոցների դեկավարների բողոքների պատճառով հիմնադիրները որոշեցին փակել circle.am-ը: Այժմ լրատվական կայքերի դիտումների հետ կապված մոնիթորինգ իրականացնող ամենատարածված համակարգը similarweb-ն է, որը ամեն ամսվա սկզբին հրապարակում է նախորդ ամսվա ընթացքում ամենից շատ այցելուներ ունեցած կայքերը: Այդ համակարգը կիսարաց ռեժիմով է աշխատում, ինֆորմացիաներ ստանալու համար պետք է գրանցվել եւ գումար վճարել: Ինչ վերաբերում է Հայաստանի տպագիր լրատվամիջոցների թվին, ապա 2016թ. օգոստոսի 31-ի դրույթամբ գրանցված եւ հաշվառված են նյութական կրիչի վրա թողարկվող 1330 զանգվածային լրատվության միջոց, որից՝ 876 թերթ եւ 454 ամսագիր: Այս մասին մեր հարցմանն ի պատասխան հայտնեցին արդարադատության նախարարությունից:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Անալիտիկոն» հանդես, 2011թ ապրիլ
<http://analyticon.org/ARCHIVE/2011/april/april-2011-new-media.pdf>
2. https://www.gazeta.ru/news/business/2011/10/03/n_2035814.shtml

3. Նույն տեղում:
4. <https://www.theguardian.com/technology/2011/sep/22/tablet-forecast-gartner-ipad>
5. Նույն տեղում:
6. Ռոլանդ Դե Վոլկ, Օնլայն ժուռնալիստիկա, Եր., 2003, էջ 96:
7. <http://actualweb.ru>; <http://people-press.org/report/689/>
8. <http://digitaljournalist.org/issue0002/okrent.htm>
9. <http://www.techmanage.net/T11/011>
10. <http://www.a1plus.am/am/social/2012/03/16/eph>
11. <http://listverse.com/2011/07/03/top-10-reasons-the-newspaper-is-dying/>
12. <http://www.circle.am/?go=catinfo&cat=onelist>
13. <http://www.circle.am/?go=catinfo&cat=news>

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Ավանդական և նոր մեդիա. մրցակցություն և համակեցություն ինքա Մարտինյան

Հոդվածում անդրադարձել ենք ավանդական եւ նոր մեդիայի համակեցության եւ մրցակցության խնդիրներին, պայքարի օբյեկտներին, տպագիր դարաշրջանի ավարտի մասին կանխատեսումներին: Միեւնույն ժամանակ. կան մի շարք տեսաբաններ, ովքեր պնդում են, որ տպագիր թերթն ու գիրքը երբեք չեն վերանա:

РЕЗЮМЕ

Особенности сосуществования и борьбы между старыми и новыми медиа Инга Мартинян

Ключевые слова: традиционные, новые медиа, теоретики, исследования, газеты, книги, электронные хранения, электронные книги, интернет, СМИ, веб-сайты, социальные сети.

В статье затрагивается проблема сосуществования и борьбы между старыми и новыми медиа, обозначены объекты борьбы, представлены содержащиеся в зарубежных блогах, теориях и лекциях доводы о завершении эры печатных медиа. Есть также немало теоретиков, настаивающих на том, что печатные газеты и книги не исчезнут.

SUMMARY

Peculiarities of coexistence and struggle between old and new media Inga Martinyan

Keywords: traditional, new media, theorists, research, newspapers, books, electronic storage, internet, e-books, internet, media, websites, social networks.

The article touches upon the issue of coexistence and struggle between old and new media, defines the objects of the struggle as well as presents the arguments found in foreign blogs, videos and lectures regarding the end of the print press era. There are also many theoreticians, claiming that print papers and books will never disappear.